Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12020

891.99
Z-36

Асанъ Джалалянца

ՏԱՂՔ

ԱՍԱՑԵԱԼՔ

Ի ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ

Ի ՎԱՆՍ ՍԱՆԱՀՆԻ

ՅԱՄԻ 1844

2003

ՏՓԽԻՍ

Ի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց:

1878

891.99
Հ-36

ՏԱՂՔ

ԱՍԱՑԵԱԼՔ

Ի ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ

Ի ՎԱՆՍ ՍԱՆԱՀՆԻ

ՅԱՄԻ 1844

ՏՓԽԻՍ

Ի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց:

1878

2812

Дозволено цензурою. Тифлисъ, 8 Марта, 1878 года.

Типографія Мартиросіанца, на Орбеліановской улицѣ, т. № 5.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մինչդեռ Սանահնի Վանից Հոգևոր Դրպրոցի մէջ մասնաւոր ուսումն կ'շարունակէի, ինձ բաղձալի էր երբեմն երբեմն յիշեալ Վանից Ամենափրկիչ եկեղեցւոյն ներսի խորանին մէջ դարսած հին տպագիր և ձեռագիր գրքերն աչքէ անցընելու, որոնք իմ մտացս կրթութեանը մէկ առանձին զբաղմունք եղած էին. սոյն այս զբաղմանցս ժամանակը նոյն խորանին անկիւնների մէկին մօտ իմ հետաքրքրութիւնս շարժող մի թերթ գտայ, որուն վրայի գրուած ձեռագիրը Սարգիս Վարդապետի (*) գրութիւնն էր. կարդալուս ժամանակն գոգցես մէկ աշխոյժ և զգացմունք տիրեց ինձ վերտառեալ թերթին պակասներն որոնել և գտնել, որուն վերայ գրուած էր. «Ով մահ դառն է յիշատակ քո և դու գլխովին» և այլն. գտի շատ որոնելուցս եռքը մի և նոյն ձեռագիրը, որուն վերայ գրուած էր «Սուտ կենցաղոյդ հետևեցայ» և այլն:

(*) Այժմ Արքեպիսկոպոս.

Վերջինս իմ հետաքրքրութիւնս աւելի աւելցուց, և իւր գլխատառերէն՝ որ կբաղկացնէր «Սարգիս», և առաջին երգի վերջին տողէն աւելի համոզուեցայ որ Ղալալեանց Սարգիս Վարդապետն պիտի գրած լինի, որուն վարդապետ եղած ժամանակուան աշխոյժն ևս այնպէս կը վկայէր։ Ուստի և հետաքրքրական կերպիւ ինչպէս նոյն վանուց, նմանապէս և Սարգիս Վարդապետի աշակերտներէն՝ որոնց իրենց աշակերտութեան ժամանակը գրած և տուած էր, հաւաքեցի հազիւ հազ այս մէկ քանի երգերը, և ցոյց տուի հեղինակին, որպէս զի ճիշդ կերպիւ իմանամք իրեն գրած լինելը, ուստի և նա ինքն Սարգիս Վարդապետն ասաց որ «Սանահնայ իմ վանահայրութեանս ժամանակը աշակերտացս համար շատ այսպիսի երգեր եմ գրած, բայց ափսոս որ շատերն անհետացած են, և զարմանք որ դուք կարողացաք այդքանն ևս գտնել»։ Ուրեմն և ես երբ ստոյգն իմացայ որ իրեն հեղինակութիւնքն են, հրաման առի տպել տալու, որպէս զի գտնէ սոքա ևս ընդ փոշւով չծածկուին և չմոռնանան։ Երանի՞ թէ բոլոր հեղինակաց այսպիսի հոգեշարժ գրութիւնները հաւաքուէին և պահպանուէին անկորուստ։

Սիմեոն Ա. Ղալինեանց Օշնեցի։

ՏՈՂ Ա.

Սուտ կենցաղոյդ հետևեցայ,
Ի բարութեանց ունայնացայ.
Ի խոստմանէդ ես խաբեցայ, ո՞հ աշխարհ.
Կատարած քո է օրդալի, է սրդալի և յոյժ լալի։

Աքիսողոմ չար իշխանն ես,
Որ ըզմարդիկ ի ճաշ կոչես,
Ի զուարճանալն ի կենաց հանես, ո՛հ աշխարհ և այլն։

Բախաբ պոռնիկ կոչեմ ըզքեզ,
Դեղով ըզդէմըդ շըպարես,
Հանգչողն առ քեզ 'ի սուր հանես, ո՛հ աշխարհ, և այլն։

Գոչեմ ըզքեզ գիշեր անցեալ.
Վասն այն գործովդ ես տատանեալ,
Իբրև զալիս ծովու ծրփեալ, ո՞հ աշխարհ, և այլն։

Ի քեզ նայիմ, ոչ այլ ինչ ես,
Այլ Յովհանու դրդմենին ես
Որ հովանեաւդ զմարդիկ խաբես, ո՞հ աշխարհ. և այլն։

Սիսար կոչող Յայիէլն ես.
Որ վերմակաւ սիրոյդ ծածկես.
Ապա սուսերն ի գլուխ վարսես, ո՞հ աշխարհ. և այլն։

ՏԱՂ Բ.

Սին սաղարթիւք պաճուճեալ կաս, անիրաւ աշխարհ.
Անյագ ծախող որդւոց մարդկան Կերբերոս գազան:

Ամենայն ինչ անշարժ կարծեալ՝ առ քեզ շարժական.
Շարժեալ տանիս, լընուս անդարձ ի գուբն Ախերոնեան:

Բամք կայսերաց անցեալ դարուց և կայսերազանց.
Բռնի բարձեալ առեալ տարար յաւիտեան անդարձ:

Գունդ սուր զօրաց խըրոխտապանծ մեծ Արտաշիսի
Անգըթօրէն լուծեալ ի հող՝ արարեր փոշի:

Ի վերայ քո ո.ք պանծացան լինել երջանիկ,
Զափեալ զելս ընդ էջ իւրեանց, եղեն խաղալիկ:

Սխրալի արք առաքինիք միայն զարդանան.
Ցասումեան գեր երջանկութեան հանգչին զովանան:

Բարիք բախտին յաշխս նոցա ոչինչ ձեւանան.
Ի տեսութիւն Աստուածութեան գործով մերձենան:

Ա՜հ ո՛վ տացէ կալ ինձ յաւերժ յԵլիւսեան դաշտին.
Սիգալ ճեմել ընդ դիւցազինս այնըր մարմնոյն.

Խրախճանակից յաւերժանալ անմահից գընդին.
Կալ ի յակճիռս ախորժալուր ոսկեակ քընարին:

ՏԱՂ Գ.

ԺԱՄԱՆԱԿ

Զիս լուր ծանիք որդիք մարդկան,
Զի սուր եմ ես անմահութեան,
Հնձեմ տանիմ զամենեսեան.
Աւա՜ղ աւա՜ղ ձեզ հողածինք.
Եթէ գիտէք զիս, ո՛չ խաբիք.
Սրտի իմոյ նիւթեալ գաղտնիք
Միշտ մընան ձեզ անգիտելիք:

Անյագ որկորս ո՛չ լընանի,
Ժանիք սըրեալ իմ ո՛չ մանրի.
Ցաշաց իմոց հուր բորբոքի. Աւա՜ղ և այլն:

Ծախեմ մանրեմ զիմ դիմահար.
Ամենայն ինչ որ կոչի տարր
Լուծեալ առնեմ հարթ հաւասար. Աւա՜ղ և այլն:

Հին եմ ազգաւ քան զամենայն.
Ի վեր քան զիս Աստուած միայն.
Խորք անդնդոց յինէն ծընան. Աւա՜ղ և այլն:

Դիեւ ամենայն հիւլէք մարմնոց
Անկերպարան տատանէր հոծ.
Ես մընայի անալեկոծ. Աւաղ աւա՜ղ և այլն:

ՏԱՂ Դ.

Ո՞վ սիրտ իմ, հիմ հաշիս մաշիս.
Վաղամեռ ծաղկանց նըմանիս.
Զի՞նչ կաժիս բաղձալ յաշխարհի.
Զի՛ք ի սմա և ո՛չ մի բարի։
Սիրեա՛ դու յարաժամ զԱստուած.
Զի նա է նըպատակ մըտաց.
Ո՛չ առնէ զքեզ արտաքած,
Այլ պահէ յանիրաւ արանց։

Կեանք մարդկան ծաղկանց նըմանի.
Ժամանակն հնձէ և տանի.
Գեղեցիկ յարմարեալ մարմին
Քայքայեալ ի հող լուծանի.
Սիրեա՛ դու յարաժամ և այլն։

Զո՞ կարծես միշտ երջանկացեալ,
Արտաքին բարեօք առլըցեալ.
Նոքա չեն յաւէտ հաստատուն,
Այլ խաղ են բաղդին անկայուն.
Սիրեա՛ դու յարաժամ և այլն։

Քանի՞ մեծ կայսերք գընացին,
Գընամք մեք ըզկընի նոցին.
Ո՛չ պանծան նոքա ճոխութեամբ.
Այլ պարծին առաքինութեամբ.
Սիրեա՛ դու յարաժամ և այլն։

ՏԱՂ Ե.

Ցաւք դըժընդակք զինև շուրջ գան.
Ի կուլ մարմնոյս միշտ պատրաստ կան.
Խըղիկ մարմնոյս կայ վըտանգի.
Մերձեցաւ ժամ իմ կործանման։

Արմատահատ տապարն ցուցաւ.
Ահ, լոյս աչացս պակասեցաւ.
Դալուկ մահուան ի յիս հարաւ.
Կեանք իմ զուարթ ի չի՛ք դարձաւ։

Տէր իմ Աստուած, հաս յօգնութիւն.
Մեռեալ մարմնոյս տուր զօրութիւն.
Դու ի Նային այրի կընոջ
Որդւոյն ետուր զկենդանութիւն։

Կամ անխընամ անկեալ իսպառ,
Բոց ժանտ ցաւոյս դառնայ ի վառ.
Թէ ո՛չ հասցէ քո սուրբ նըպատակ,
Փութով նըստիմ ի մարդակառ։

Աղքատասէր անուանեցար.
Գործով ցուցեր մինչև ցայս դար,
Եւ կատարես միշտ յաւիտեան.
Պահեա՛ ո՞վ Տէր զկենաց իմ լար։

Ծածկեալ խորհուրդ և սրտիս բան
Քո՛ Տէրութեան յայտնեցեալ կան.
Տուր կատարումն ո՞վ իմ Աստուած.
Ապա դառնամ՝ ի խոր տապան։

ՏԱՂ Զ.

Շինուած մարմնոյս քայքայեցաւ,
Ի մրրրկէ տապալեցաւ.
Ի խորս ծովու ընկղմեցաւ.
Ո՜հ, իցէ՞ արդեօք շինիլ սրմա վերըստին։

Հաս ծերութիւն, ճնշեաց ուժգին.
Հար տապալեաց զիս գլխովին.
Եբարձ զիմ կար բոլորովին.
Ո՜հ, իցէ՞ արդեօք կրկին սրմա մանկանալ։

Ալիքս արդէն ըսպիտակի.
Գամ իմ դարձիս դայ հասանի.
Զափ իմ կենացըս լընանի.
Ո՜հ, իցէ՞ արդեօք տեսից ըզսա վերըստին։

Ա՜հ, մանկութեան անմեղ վիճակ.
Փողփողէիր զերթ մանուշակ.
Աւա՜ղ, անցեր անժամանակ.
Ո՜հ, իցէ՞ արդեօք դառնալ սրմա վերըստին։

Վերակոչէ տիրող բնութեան
Տալ ըզհամար անտեսութեան.
Բիւր քանքարոյ գոմ պարտական.
Ո՜հ, իցէ՞ արդեօք ներեսցէ նա գրթութեամբ։

Յախտրս մեղաց թաւալեցայ.
Ես զիս խապառ անմահ վարկայ.
Այժմ ապաշաւն ըզկընի գայ.
Ո՜հ, իցէ՞ արդեօք ներեսցէ նա գրթութեամբ։

ՏԱՂ Է.

Ո՜վ մահ, դառն է յիշատակ քո և դու գլխովին.
Քանի՞ յաչաց դեռս արտասուաց հեղուս լիովին։

Ահա՛ արդէն մարք հերարձակք սրգան ողբագին.
Անբոյժ սրրով քո խոցոտեալ՝ հաշին և մաշին։

Ո՛չ կաշառիս, ո՛չ զիջանիս ումեք ի խնդիր.
Ո՛չ ողորմիս թըշուառացեալ արանց ցաւակիր։

Գերանդի սուր ի ձեռին քում անարգել հնձես.
Ծեր և մըղայ ի մի կարգի ի հող լուծանես։

Քանի՞ հասակ դեռափրթիթ միամոր մանկանց.
Անգրթօրէն հնձեր, հատեր մկրատաւն Պարկեանց։

Քանի՞ դիւցազն արս հոյակապ տապաստ կացուցեր.
Ի հողախիշտ գերեզմանի բարդեալ դիզեցեր։

Քանի՞ պալատ երկնանըման յաւեր դարձուցեր.
Եւ ի փոշի մոռացութեան խապառ կորուսեր։

Մեծ Սողոմոն քաջ իմաստուն փորձեաց լաւապէս.
Ազդու բանիւ վրճիռ եհատ դատ արդարապէս։

Ունայնութիւն ունայնութեանց հառաչմամբ ասաց,
Սուտ և պատիր փառք աշխարհիս իսկապէս վճռեաց։

Որով եցոյց թէ կեանք մարդկան ըստ պըղպըջակի
Վեր երևեալ յերեսըս ջուրց իսկոյն կորընչի։

Զոյգ ընդ կենաց անուն և փառք անդէն շիջանի.
Ցանդարձ ուղի ձեռամբ մահու վճռի և տանի։

Աստանօր բանք իմ եղկելոյս առ այն բարձրացի.
Որ տիրողն է կենաց մահու բոլոր աշխարհի,

Որպէս զի նա ըզմահըն իմ արտասցէ բարի,
Երգող երգոյս Նուաստ Սարգիս կըրօնաւորի։

ՏԱՂ Բ.

Ո՜խ դու Արամազդ չաստուած անգորով.
Հի՞մ դու խանգարես զիմ բախտին հոլով.
Ես զի՞նչ արարի ապիրատ ըղձան,
Զինէն գանգատին տարերք ամենայն։

Ճակատագիրն ընդ իս անհաշտ թշնամի,
Արար տարագիր, մաշեաց զիմ հոգի.
Ի գունդ աշխարհիս եթող երերեալ,
Նըման համբարուի կոծել և միշտ լալ։

Իմ խիշտ փետրալից լոկ գետին արար.
Բարձ գլխոյ իմոյ վիճակեցաւ քար.
Ետ ըմպել ինձ ջուր ի Ստիքսեան գետոյն,
Ուրանոր կամէր առնել գետամոյն։

Թէ այսպէս ընդ իս վարել միշտ կամի.
Տանջել չարաչար, առնել զիս գերի.
Կիկղոպ անգըթոյ դու զիս կեր մատնեա՛,
Խաղալեք որդանց զիմ մարմին արա՛։

Առաքեա՛ առ իս ըզշանթ Հեփեստեան.
Հար ըսպա՛ն դու զիս, արկ մահու կործան.
Տո՛ւր ինձ յերկարել յարգանդ մթութեան.
Ի փոս անարև տանջել յաւիտեան։

Թերևս ճակատագիրն ընդ իս հաշտեսցի.
Կնճիռ ճակատոյն 'ի ժըպիտ դարձցի,
Քրքմափայլ արև նըմա ծագեսցի.
Վարդալի այգեօք նա զուարճասցի.

Ո՜խ, ո՜վ ճակատագիր անհաշտ թշնամի.
Մինչև երբ ծիւրեալ հալես զիմ հոգի.
Է՞ր մամռնայի լինիս ունկնդիր.
Հըրաւիրես զիս ի պաշտօն զազիր։

Նըրեւի հայր ես միշտ արանց չարաց.
Անհաշտ թշնամի գործողաց բարեաց.
Ըզնոսա հանես 'ի գագաթ փառաց.

ՏԱՂ Թ.

Անմահից դշխոյ մայր անզուգական,
Ծընող Աստուծոյ, ոսկի Սոփերեան.
Անմահ բարունակ տոհմին Յակոբեան.
Կնքեալ դարաստան և ճիռ օրհնութեան։

Ճառագայթափայլ աստղ առաւօտեան.
Ընտիր մարգարիտ ազգին Յուդայեան.
Զուր կենդանութեան, պարգև Աստուածեան.
Ոսկեղէն սափոր, հոտ անմահութեան։

Ծունըր կրկնեա՛ դու առ Աստուածըն Բան.
Պահեսցէ ըզԿայսրըն մեր անսասան,
Ընդ նըմին ըզԻշխանն մեր Հայկազեան՝
Զներսէս Պատրիարք բոլոր Արամեան։

Նաև մեր պաշտպան խնամակալ բարին՝
ԸզՏէր Կարապետ գերապանծ արհին.
Ընդ նոսին նաև տանըս մեր պաշտպան՝
Արմատ օրհնութեան տունըն Արղութեան։

Շառաւիղ նորին դիւցազըն իշխան՝
Յովհաննէս անուն իշխան Զաքարեան.
Եւ մեք տացուք փառս երրեակ միութեան,
Որ տիրողն է մեզ այժմ և յաւիտեան։

ՏԱՂ Ժ.

Սէր Աստուած համայնից կերտող բոլորից.
Ի յանգոյութենէ դու գոյացուցիչ.
Հաստիչ ես էութեանց բոլոր էակաց.
Էակք կախին ի քոց յանեղ էութենանց։

Համայն գոյացութիւնք քև յառաջ եկին.
Իսկ քո զուտ գոյութիւն ի քեզ ամփոփի.
Խորութիւն քո անչափ է անտարրափակ.
Անհաս անբաւ բոլորն և մեզ անգիտակ։

Բարուն վերնոց և քո էակից Որդին,
Ծընաւ անժամանակ Աստուած ծոցածին.
Ո՛չ ի հարկէ ծընաւ և ո՛չ ի կամաց.
Այլ առնչակցապէս փառակից փառաց։

Ի քո խսկութենէ բղխեցեր զՀոգին.
Զիարդ նորա անհաս մըտաց մարդկային.
Սուրբ Եկեղեցի մեր զայս խոստովանի,
Թէ ի քէն ել ամբողջ, առ քեզ դադարի,
Ապա՛ ձեռամբ քո սուրբ միածին Որդւոյ
Բաշխեալ առ արարածս ծաւալեալ հանգչի։

ՏԱՂ ԺԱ.

Շըքեղաշուք հզօր իշխան՝
Պայծառ պըսակ տանն Արղութեան.
Անյաղթ հրոսկայ քաջ զօրական՝
Մովսէս իշխանըդ Զաքարեան.
Առիւծ արի անպարտելի.
Ե՛կ սէր իմ եկ:

Մեծ զօրավար Կայսեր Ռուսաց
Ընդդէմ գռոզ լեռնականաց.
Ազգիս Հայոց Թագ պարծանաց,
Ընտիր սերունդ Բագրատունեաց,
Առիւծ արի անպարտելի.
Ե՛կ սէր իմ եկ:

Ծաղկէնըկար դաշտ Կովկասեան
Ցորդավըտակ առնես արեան.
Դիաթաւալ կացուցանես
Զանօրէն զօրըն Շամիլեան.
Առիւծ արի անպարտելի.
Ե՛կ սէր իմ եկ:

Մեծ Սպասալար Վեհ քո Նախնին
Ցոտին կացոյց զտուն Թամարին.
Եւ Դու յաւէտ նըման նըմին.
Հանդիսացար ի գոռ մարտին.
Առիւծ արի անպարտելի.
Ե՛կ սէր իմ եկ:

ՏԱՂ ԺԲ.

Ի մեր դարուն կայր մըթայեալ
Ցոլով աշխարհ ի գիտութեանց.
Փառք յաղթութեան յաճախեցաւ.
Փայլէ ի գլուխ ոճրագործաց:

Գործով լըսաւ յունկն աշխարհաց
Թէ կայր շըջի արդարութիւն.
Ոյք և կամին զամենայ պըսակ
Փառքուս ուսցին ըզըրնութիւն:

Բացաւ կրկէս ողիմպական.
Բարձաւ պատիւըն Հերքիւլեան.
Արշաւեցան կառք կաշառօք,
Խնդան ընչէն Թերսիտէսեանք:

Ջուր ջանացաւ Արիստոտէլ
Դըրել ըղձառ բարոյական.
Զի բորբոսի յանկիւնըս տան.
Քանզի փայլէն հարցմունք մանկան:

Ալ ըզըերան քո կարասի
Դիոգինէսըդ Կիւնիկեան.
Զըգըստանես քեզ աշակերտ
Ցաւէտ սիրող իմաստութեան:

Ո՛չ միայն կալ, այլ և գալեա՛,
Ի սիրտ երկրի ի խոր թաղեա.
Զի ուր իմաստ գիտութիւնք գոն,
Ցաքսոր գընան ի Կոկիսոն:

Փաստ իմաստնոց սա եղեցի,
Փշրեալ զատոքն, զի պարզ ցուցցի.
Էր տխմարաց կաճառք խնդան.
Գունդք իմաստնոց յանկիւնըս կան։

Նա որ չէ զեկ՝ զի՞նչ է կըրօն.
Նըմա յանձնեն զկրօնից պաշտօն.
Փառաց ի փառըս բարձրացեալ
Նստի հըպարտ 'ի յամպիոն։

12020